Ռ. Տ. ԲՈՋՈԼՅԱՆ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՊԱԼԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ (ԻԼԹԻԶԱՄ) ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Օսմանյան կայսրության ֆեոդալական ինստիտուտների շարքում իր ուրույն տեղն ունի հարկահանության կապալային, այսպես կոչված՝ իլթիզամի համակարգը։ Սկիզբ առնելով կայսրության պատմության առաջին հարյուրամյակներում, այն գոյատևել է ընդհուպ մինչև XIX դ. վերջերը և, բնականաբար, խոր հետքեր է թողել երկրի սոցիալ-տնտեսական կյանքում։

Իլթիզամը վաղուց գտնվում է Թուրքիայի միջնադարյան և նոր պատմությունն ուսումնասիրող մասնագետների ուշադրության կենտրոնում։ Տարբեր աշխատություններում սույն հարցին անդրադարձել են ինչպես սովետական, այնպես էլ արտասահմանյան հեղինակները[1]։ Սակայն մինչև օրս այն հատուկ ուսումնասիրության առարկա չի եղել։ Այս առումով ներկա աշխատությունը իլթիզամի էությանը և զարգացմանը նվիրված առաջին փորձերից մեկն է և, հետևաբար, չի կարող հավակնել սպառիչ լինելուն։ Ի՞նչ բան է իլթիզամը, ե՞րբ և ի՞նչ պայմաններում է սկիզբ առել, զարգացման ի՞նչպիսի փուլեր է անցել և ինչ դեր է խաղացել կայսրության սոցիալ-տնտեսական կյանքում։

Պետական հարկերի գանձման իրավունքի վաճառքը մասնավոր անձանց՝ որոշ դրամական փոխհատուցումով, որը լայն տարածում էր գտել Օսմանյան կայսրության տարածքում, պատմական գրականության մեջ հայտնի է որպես իլթիզամի համակարգ։

Ինչպես հայտնի է, առևտրից, արհեստներից և հողագործությունից ստացված եկամուտները կուտակվում էին մայրաքաղաքում գտնվող պետական գանձատնում (harine–i ümera)։ *Եկամտի աղբյուրները կոչվում էին մուկատաաներ* (mukataat)[2]։ *Օրինակ, մետաքսի արտադրությունից և առևտրից կորզվող հարկերի և տուրքերի միագումարը կոչվում էր մետաքսի մուկատաա* (ipek mukataasi), *աղի արդյունահանումից ստացվող եկամուտը՝ աղահանքերի մուկատաա* (tuz mukataasi) *և այլն։*

Յուրաքանչյուր մուկատաայի վարչություն կառավարվում էր գործերի կառավարչի (Emin) կողմից։ Այս վերջինս իր աշխատանքի դիմաց ստանում էր օրավարձ, կամ էլ իր տնօրինության տակ գտնվող մուկատաայից գանձված հավելյալ գումարը յուրացնում էր։ Սակայն նկատի առնելով այն հանգամանքը, որ էմինները շահագրգռված չէին պետության եկամուտներն ավելացնել, վերջինս աստիճանաբար սկսեց նախապատվություն տալ մուկատաաներից հարկեր գանձելու իրավունքը կապալային հիմունքներով (ber yech-i iltizam) վաճառքի հանելուն[3]։ Այսպես սկիզբ առավ իլթիզամի ինստիտուտը։

Օսմանյան ժամանակագրություններում և նրանց հիման վրա շարադրված հայրենական և արտասահմանյան ուսումնասիրություններում գերիշխում է այն տեսակետը, որի համաձայն իլթիզամը արմատավորվել է Օսմանյան կայսրությունում XVI դ. կեսերից սկսած։ Նման կարծիքի հետ չի կարելի համաձայնել, քանի որ վերջին տասնամյակներում հայտնաբերված արխիվային փաստաթղթերը վկայում են, որ իլթիզամը գոյություն է ունեցել շատ ավելի վաղ։ Նույնիսկ թուրք պատմաբան Յ. Ցուչելը, առայժմ մեզ անհայտ աղբյուրների վրա հենվելով, պնդում է, որ այն կիրառվել է Օսմանյան պետության հիմնադրման օրից[4]։ Պարզապես XVI դ. կեսերին այն տարածվել է նաև հողից գանձվող հարկերի վրա և վերածվել մի ամբողջական համակարգի։

Իլթիզամի էությունը հետևյալն էր։ Յուրաքանչյուր տարի կրոնական տոներից մեկի, հաճախ ռամազանի, նախօրյակին մայրաքաղաքում և վիլայեթների կենտրոններում մուկատաաները աճուրդի էին հանվում[5]։ Սովորաբար այդ իրավունքին տիրանում էին ամենաբարձր կապալագին առաջարկողները, որպես կանոն՝ պետական բարձրաստիճան պաշտոնյաները։ Այդ անձինք ստանում էին մյուլթեզիմ (իլթիզամի հանձնառու) մականունը[6]։

Այն պաշտոնյան, որը մուկատաայի եկամուտների չափը տեղում որոշում և անմիջականորեն գանձում էր հարկերը, կոչվում էր ամիլ (amil)։ Իլթիզամի տրվող մուկատաաների ամիլները հենց իրենք մյուլթեզիմներն էին։ Պետության կողմից նշանակված էմինները տեղերում հսկում էին մյուլթեզիմների գործունեությանը։ Ե՛վ էմինը և՛ ամիլը առանձին մատյաններում գրանցում էին հարկերի տեսակներին և չափը, ապա երկու մատյանների տվյալները համեմատում իրար հետ։ Սրանով պետությունը ջանում էր թույլ չտալ, որպեսզի մյուլթեզիմը յուրացնի եկամուտների մի մասը[7]։

Քանի որ մյուլթեզիմը ի վիճակի չէր անձամբ շրջել ողջ գավառը և զբաղվել հարկահանությամբ, նա վարձում էր գործակալներ, որոնք օրավարձով հարկահավաքի պաշտոն էին կատարում։ Սովորաբար ամենաեկամտաբեր մուկատաաները բաժին էին հասնում մայրաքաղաքի բյուրոկրատիայի ներկայացուցիչներին, երբեմն էլ՝ խոշոր սիփահիներին[8]։ Հաճախ էր պատահում, որ դեռ վարձակալության ժամկետը չլրացած, պետությունը իլթիզամը վերավաճառում էր ավելի բարձր կապալագին առաջարկողին։ Ըստ թուրք հետազոտող Մ. Ակգաղի վկայության, Բուրսա քաղաքի Դատական արձանագրությունների արխիվում (ser'iyye sicilleri) պահվում են այս փաստը հաստատող բազմաթիվ նյութեր։ Բերենք դրանցից մեկը։

«Բուրսա քաղաքի կադիի 17 ռեջեբի 864 (16 մայիսի 1557) տարեթվով դիմումից։ Հեծելազորի զորամասի 21-րդ վաշտից Արգուլքերիմը, 192-րդ վաշտից Մեհմեդը և 122-րդ վաշտից Իսկենդերը (կադիին) դիմեցին հետևյալ խնդրանքով. եթե Բուրսայի խասսա (արքունական) մուկատաաներից գանձվող մետաքսի, նժարի և մաքսերի իլթիզամը խլվի այն երեք տարով վարձած ոմն Ալիից և վաճառվի իրենց, ապա նրանք պարտավորվում են կապալագին ավելացնել ևս 580 000 ակչեով»[9]։

Պատահում էր, երբ մյուլթեզիմները տարբեր ճանապարհներով ձեռք բերած մուկատաաները տեղնուտեղը և, բնականաբար, ավելի բարձր գներով՝ վերավաճառում էին կամ մասնատելով կապալի էին տալիս առանձին անհատների։ Մասնատված մուկատաայի յուրաքանչյուր մասը կոչվում էր «pare mukataasi»։ Եթե մյուլթեզիմը ի վիճակի չէր լինում կանխիկ վճարել ամբողջ կապալավարձը, այդ դեպքում նա պարտավորվում էր այն մուծել մաս առ մաս (kist taksid)[10]։

Կայսրության հզորության շրջանում պետությունը աշխատում էր մուկատաաների կառավարումը հանձնել իրենից անմիջական կախման մեջ գտնվող էմիններին, սակայն երբ վրա էր հասնում հերթական ֆինանսական ճգնաժամը, նորից ստիպված էր լինում դիմել մյուլթեզիմների ծառայությանը։ Ըստ աղբյուրների վկայության, XVI դ., երբ կայսրությունը հասել էր հզորության գագաթնակետին, մուկատաաները հիմնականում տնօրինել են էմինները[11]։

Սովորաբար կապալառության ժամկետը սահմանափակվում էր մեկից երեք տարով։ Այս կարգը հազվադեպ էր խախտվում։ Ավելի հաճախ կիրառվում էր մուկատաաները մեկ կամ երկու տարով իլթի-

զամի տալու պրակտիկան[12]։ Անկախ պետությանը վճարած կապալավարձից, ամիլը՝ լիներ նա էմին թե մյուլթեզիմ, սույն գումարի 0,02 տոկոսի չափով մի գումար ևս հատկացնում էր արքունիքի կրտսեր սպայակազմի ծախսերը հոգալու համար։

Բացի վեզիրներից և փաշաներից, իրենց վստահված տիրույթներից հավաքվող հարկերը իլթիզամի էին տալիս նաև սանջակների կառավարիչները և նույնիսկ որոշ խոշոր սիփահիներ։ Այս դեպքում ևս առկա էր պետական եկամուտների կապալի տրվելու փաստը, սակայն, ի տարբերություն մինչև այստեղ շարադրվածի, տվյալ դեպքում գործարքը կնքվում էր ոչ թե կենտրոնական կառավարության և կապալառուի, այլ շարքային պետական պաշտոնյայի, որն այդ տիրույթի անմիջական տերը չէր, և մասնավոր անձերի միջև[13]։ Դա որակապես նոր երևույթ էր Օսմանյան հասարակության տնտեսական կառուցվածքի մեջ, որը որոշ ժամանակ անց ծնունդ էր տալու նոր սոցիալական հարաբերություններին։ Այսպիսով առաջանում էր պորտաբույծ շահագործողների բավական երկար մի սանդուղք, որի յուրաքանչյուր աստիճանին թառած կապալառու ձգտում էր իրեն ենթակա իլթիզամից առավելագույն շահույթ կորզել։ Ինքնին հասկանալի է, որ ինչքան երկարում էր այդ սանդուղքը, նույնքան սաստկանում էր հարկատու զանգվածների կեղեքումը։

Իլթիզամի սիստեմի տարածման ժամանակ պետությունը կանգնեց իր համար բացասական մի փաստի առջև։ Վերևում նշել էինք, որ նորընծա կապալառուները, ի վիճակի չլինելով կապալավարձը կանխիկ վճարել, պարտավորություն էին ստանձնում այն մուծել մաս առ մաս։ Սակայն հաճախ էր պատահում, երբ մյուլթեզիմները այս կամ այն պատճառով ուշացնում էին մուծումները, իսկ այս հանգամանքը խանգարում էր պետական միջոցառումների ֆինանսավորումը։ Այդ իսկ պատճառով իլթիզամների վաճառքի ժամանակ կենտրոնական կառավարությունը սկսեց օգտվել հարուստ դրամատերերի ծառայությունից։ Որոշ մեծահարուստների պետական գանձատան վարչությունը տրամադրում էր, այսպես կոչված «արտոնյալ մուրհակներ» (imtiyazli senetler) ու այս վերջիններս ձեռք էին բերում կապալառու-մյուլթեզիմներին երաշխավորելու մենաշնորհը[14]։ Այսպիսով պատմաբնմ իջավ խոշոր դրամատերերի մի կորպորացիա, որի ներկայացուցիչները հիմնականում բնակվում էին Պոլսո Ղալաթիո թաղամասում և ապրում էին բացարձակապես ի հաշիվ իլթիզամներից ստացած տոկոսների[15]։

Նորընծա խավի ներկայացուցիչները հայտնի դարձան «Գանձարանի դրամափոխներ» (hazine sarraflari) անունով։ Ընդ որում նրանց ծառայությանն սկսեցին դիմել ոչ միայն մյուլթեզիմները, այլ նաև վիլայեթներում կառավարիչ նշանակվող փաշաները, որոնք որպես կանոն՝ ծառայության սկզբում միջոցներ չէին ունենում[16]։

Դրամափոխ-սարրաֆները 2500-ից մինչև 10000 ղուրուշ արժողությամբ մուրհակ ձեռք բերելու հարկ (berat harci) էին մուծում և կապալագինը ամբողջությամբ մուծելուց հետո արտոնյալ մուրհակները հետ էին ստանում[17]։ Այստեղից հետևում է, որ ամեն մի սարրաֆ միաժամանակ կարող էր երաշխավորել լոկ մեկ մյուլթեզիմի։ Այն պահից, երբ գործարքը կնքվում էր, մյուլթեզիմը մեկնում էր իր տիրույթը, ուր կառուցել էր տալիս իր դղյակը և ստեղծում սեփական շահագործման ապարատը, որի մեջ մտնում էին՝ երկու խորհրդական, երկու թիկնապահ, մեկ սպա և երեսունից քառասուն հոգուց բաղկացած զինված մի ջոկատ, որը նրա տիրակալության օրոք կատարելու էր ոստիկանական ֆունկցիա[18]։ Չնայած այն հանգամանքին, որ մյուլթեզիմը պատասխանատու էր նաև տվյալ վայրի անվտանգության համար, սակայն նա բացարձակապես զբաղվում էր հարկեր կորզելով։ Նրա գործակալները գիշեր-ցերեկ շրջում էին փողոցներում, որպեսզի հայտնաբերեն և ձերբակալեն «օրինազանցներին»։ Այս հասկացության տակ էին մտնում խաղամոլները, հարբեցողները, գիշերով առանց կանթեղի տնից դուրս եկած անցորդները և այլն։ Սակայն հաճախ էր պատահում, երբ «օրինազանցների» ցուցակի մեջ էին ընդգրկվում նաև տեղի ունևորները, որոնք ի վիճակի էին բարձր փրկագին վճարել[19]։

Ուշագրավ է այն փաստը, որ առաջին սարրաֆները դուրս են եկել կայսրության տարածքում բնակություն հաստատած հրեաների միջից, որոնցից մի մասը՝ առավելապես մահմեդականություն ընդունողները, հաճախ դարձել են նաև մյուլթեզիմներ[20]։ Սակայն հայ առևտրական բուրժուազիայի ձևավորումից հետո, հայազգի և մասամբ հույն սարրաֆները դարձան գերիշխող։ XVIII դ. և հատկապես XIX դ. առաջին կեսին խոշոր իլթիզամների առյուծի բաժինը գտնվում էր հայ դրամատերերի, հատկապես պոլսահայ սարրաֆների հսկողության տակ[21]։

XVII դ. առաջին տասնամյակներում, այսինքն ջելալիների շարժման[22] մայրամուտից հետո, պետական հողերի ճնշող մեծամասնու-

թյունը կազմող թիմարների քանակը խիստ նվազել էր։ Դարի կեսերին պետությունը որոշում է պահպանված թիմարների մոտ 50 տոկոսի եկամուտները վերցնել անմիջական հսկողության տակ։ Այս պահից ըստ կրսած, զանազան պատճառներով անտիրական մնացած թիմարները կամ զավթվում են բարձրաստիճան պաշտոնյաների, առավելապես մայրաքաղաքային բյուրոկրատիայի ներկայացուցիչների կողմից; կամ պետության կողմից կապալի են տրվում։ Նախկին սիփահիների մի մասը ևս վերածվում է մյուլթեզիմների[23]։

XVII դ. վերջերին իլթիզամի ինստիտուտը ենթարկվեց որակական փոփոխությունների։ 1695 թ. հունվարի 30-ին Բարձր Դուռը հրապարակեց հատուկ մի հրովարտակ, որով նախկինում սահմանափակ ժամկետով կապալի տրվող մուկատաաները վերածվում էին անժամկետ կամ ցմահ տիրույթների[24]։

Պետական մուկատաաները ցմահ կապալի տալու երևույթը ստացավ «մալիքյանեի սիստեմ» (malikane sistemi) անունը, իսկ այս հիմունքով իլթիզամի տրվող մուկատաաները սկսեցին կոչվել «մալիքյաններ»[25]։

Պետությանը այս քայլին դիմելու դրդեցին մի շարք կարևոր հանգամանքներ, որոնցից ամենաէականը, արտաքուստ, ֆինանսական դժվարություններն էին։ Այդ դժվարությունները բացատրվում էին հետևյալ պատճառներով.

—XV—XVI դդ. խոշոր աշխարհագրական հայտնագործությունների հետևանքով ինչպես Եվրոպան, այնպես էլ Օսմանյան կայսրությունը հեղեղվել էր անդրօվկիանոսյան էժան ոսկով ու հատկապես թուրքական հիմնական դրամամիավորի հումք հանդիսացող արծաթով, որի հետևանքով թուրքական ակչեն խիստ արժեքազրկվել էր։

—Այդ նույն պատճառով Եվրոպան Արևելքին կապող առևտրական մայրուղիները փոխել էին իրենց ուղղությունը, իսկ դա հարվածեց առևտրին ու արհեստներին։

— XVI—XVII դդ. կայսրությունում ծավալված ներքին խռովությունները, որոնք պատմությանը հայտնի են «ջելալիների շարժում» ընդհանուր անվամբ, մեծ վնաս էին հասցրել պետության եկամուտներին, քանզի հարկահանության մենաշնորհն ստանձնած մյուլթեզիմները կա՛մ չէին կարողանում, կա՛մ էլ, օգտվելով ողջ երկրում տիրող անիշխանությունից՝ հրաժարվում էին կատարել կապալավարձի հերթական մուծումը։

—Ժամանակին Օսմանյան բանակի հիմնական կորիզը հանդիսացող սիփահիների հեծելազորը կորցրել էր ռազմական նշանակությունը, այդ իսկ պատճառով բանակը հետզհետե համալրվում էր վարձկան ենիչերիներով, որոնց ֆինանսավորման համար ահռելի միջոցներ էին պահանջվում։

—Սահմանափակ ժամկետով իլթիզամներ ձեռք բերողները մտահոգված էին կարճ ժամանակահատվածում առավելագույն շահույթ կորզել, այդ իսկ պատճառով խլում էին հարկատուների վերջին ունեցվածքը՝ դրանով իսկ վտանգելով պետության եկամուտների ապագան։

Այս արտաքին երևույթների կողքին կար նաև մի ներքին պատճառ, որի նշանակությունը դժվար է գերագնահատել. XVII դ. վերջերից օսմանյան ֆեոդալիզմը թևակոխեց իր զարգացման ամենաբարձր փուլը, որի առաջին նշանները եղան կենտրոնական իշխանության թուլացումը և նախկինում լիովին կենտրոնից կախված վալիների, սանջակբեյերի և սիփահիների ֆեոդալիզացիան։ Դրա անմիջական հետևանքը եղավ սեպարատիստական և ապակենտրոնական միտումների ուժեղացումը, որոնց հիմնական նպատակը պետական հողերի վրա մասնավոր սեփականատիրության հաստատումն էր[26]։

Մալիքյանների համակարգի տարածմանը համընթաց իլթիզամի առարկա է դառնում նաև հողը, հիմնականում՝ իրենց պարտավորությունները չկատարող սիփահիներից իլված, կամ մարտի դաշտում սպանված սիփահիներից թափուր մնացած թիմարները[27]։

Այս համակարգի օրոք մյուլթեղիմների քանակն ուղղակի կախված էր վիլայեթներում ու սանջակներում տարածված հողատիրության ձևերի՝ խասսերի, վաքֆների, զեամեթների և թիմարների քանակից[28]։ Սակայն պատահում էր, երբ որևէ վիլայեթի կամ սանջակի բոլոր եկամտի աղբյուրները կենտրոնանում էին նույն անձի ձեռքում։

Մալիքյանների ընձեռած հնարավորությունները դրդեցին պետությանն այն տարածել բոլոր հարկատեսակների վրա։ Շատ չանցած ամենաեկամտաբեր մալիքյանները վերածվեցին վեզիրների, փաշաների, ինչպես նաև պալատական կանանց (տիկին սուլթանների) մասնավոր կալվածքների[29]։

Մալիքյանների վարձակալները ևս նախընտրում էին օգտվել կապալառու-մյուլթեղիմների ծառայությունից, իսկ իրենք բնակվում էին որևէ խոշոր քաղաքում և ապրում ի հաշիվ ցմահ տիրույթներից ստացած ռենտայի[30]։

Սրանք, որպես կանոն, մալիքյանեներում հարկերի հավաքման և ներքին անվտանգության պահպանման գործը հանձնարարում էին իրենց փոխանորդներին, այսպես կոչված՝ «վոյվոդաներին»[31]։ Վոյվոդաներն էլ իրենց հերթին, հարկերի հավաքման գործը կապալի էին տալիս երկրորդական մյուլթեղիմներին[32]։ Փաստորեն մալիքյանեների բնակիչներն անմիջական կախման մեջ էին մյուլթեղիմներից, ծայրահեղ դեպքում՝ սուբաշիներից[33]։

Եթե նախկինում իլթիզամը պետության և առանձին անհատների միջև կնքվող մի գործարք էր, ապա մալիքյանեի սիստեմի օրինականացումից հետո այն վերածվեց մասնավոր անձանց միջև կնքվող մի գործարքի։ Այս հանգամանքն ունեցավ, ինչպես վերևում նշեցինք, ոչ միայն տնտեսական, այլ նաև սոցիալական հետևանքներ։ Այս պահից սկսած մյուլթեղիմ դառնալու ավելի լայն հնարավորություններ են ստանում տեղական ավազակու ներկայացուցիչները՝ այանները[34]։ Ընդորում, իլթիզամները կապալի տալիս նախապատվությունը սկսում են այաններին տալ ոչ միայն մալիքյանեների տիրակալները, այլ հենց ինքը՝ պետությունը։ Օգտվելով իրենց նյութական հնարավորություններից և բարձրաստիճան իշխանավորների հովանավորությունից, այաններն աստիճանաբար իրենց ձեռքում են կենտրոնացնում տվյալ շրջանի բոլոր իլթիզամները։ Այսպիսով պատմաբեմ է իջնում ոչ պաշտոնական մի պաշտոնատար անձ, շահագործողների մի նոր տարատեսակ, որին Կ. Մարքսը բնութագրել է որպես կոպիտ դրամի հանդեպ ագահ մի նորելուկի[35]։

Ավելի ուշ շրջանում տեսնում ենք, որ իլթիզամի սիստեմը տարածվում է նաև վարչական պաշտոնների վրա։ Այսպես, 1604 թ. սեպտեմբերի 29-ին Քյուչյուք Հայմանայի սուբաշիի պաշտոնը 15 հազար ակչեով կապալի է տրվել ոմն Հասան բին Ռեջեբի[36]։ Սովորաբար վարչական պաշտոններին հավակնում էին վերոհիշյալ այանները, որոնք XVII—XVIII դդ. աստիճանաբար չեզոքացրեցին կադիների և զորահրամանատարների իշխանությունն ու վերածվեցին սանջակների միահեծան կառավարիչների։ Իլթիզամի շնորհիվ բարձր դիրքի հասած այանների մեջ ամենահզորը Թերևս Կարաոսման-Օղլուների տոհմն էր։ XVIII դ. Սարուխանի սանջակի (ժամանակակից Իզմիր) բոլոր մուկատաաները, իսկ հետագայում նաև բոլոր վարչական պաշտոններն անցան այս տոհմի ներկայացուցիչների ձեռքը, որոնք մինչև 1816 թ. արևմտյան Փոքր Ասիայի միիշխան տերերն էին դարձել[37]։

Մալիքյանի սիստեմի տարածվելն ուղեկցվում էր գյուղացիների մասսայական հողազրկմամբ։ Վերջիններս ապրուստի միջոց հայթայթելու հույսով լքում էին պապենական օջախը և մեկնում խոշոր քաղաքներ։ 1724 թ. հրապարակված սուլթանական հրովարտակներից մեկում խոսվում էր այն մասին, որ «Ռումելիի և Անատոլիայի թիմարների և զեամետների բնակիչներից ոմանք լքում են իրենց բնակավայրը, հրաժարվում են զբաղվել հողամշակությամբ և լցվում են Պոլիս։ Ջնայած պետության կողմից ստեղծված զանազան արգելքներին, Պոլսում գործազուրկների թիվն օրեցօր աճում է»[38]։ Բնական է, որ գյուղացիների մասսայական հոսքը դեպի խոշոր քաղաքներ պայմանավորված էր ոչ թե նրանց «հողամշակությամբ զբաղվելուց հրաժարվելով», այլ ֆեոդալիզմի զարգացման հետևանքով գյուղում նոր սոցիալական հարաբերությունների ստեղծումով, որին պակաս ներդրում չունեցավ նախ իլթիզամի, ապա նաև նրա բարձրագույն փուլը հանդիսացող մալիքյանի սիստեմը։

Զգալով վերահաս վտանգը, կենտրոնական կառավարությունը փորձել է վերացնել ցմահ կապալառության սիստեմը, բայց արդյունքի չի հասել։ Օրինակ, 1715 թ. սուլթան Ահմեդ III-ի հրահանգով մալիքյանի ստատուս ունեցող պետական հողերը կրկին պետք է վերածվեին կարճաժամկետ մուկատաաների[39], սակայն այս որոշումը մնաց թղթի վրա. մալիքյանի սիստեմի շնորհիվ պաշտոնի և ոնրդի հասած վալիները, մյութեսելիմները և այանները ոչ ոքի թույլ չէին տալիս ոտնահարել իրենց «հարստահարելու իրավունքը»[40]։

Համաձայն XIX դ. առաջին կեսին Փոքր Ասիայում շրջագայած եվրոպացի ճանապարհորդների վկայության, հիշյալ ժամանակաշրջանում իլթիզամի սիստեմը շարունակում էր բուռն ծաղկում ապրել։ Ամեն տարի հողային հարկի (vergi) գանձման իրավունքը աճուրդի էր հանվում ըստ վիլայեթների, սանջակների, կազաների և նահիեների։ Աճուրդներին որպես երաշխավոր հանդես էին գալիս հայ, երբեմն էլ հույն սարրաֆները[41]։

XIX դ. 30-ական թթ., երբ Օսմանյան կայսրությունում սկսեցին անցկացնել վերնախավային բարենորոգումներ, խնդիր դրվեց նաև իլթիզամը վերացնելու մասին։ Այս գաղափարը արձագանք գտավ նաև 1839 թ.-ի սուլթանական հրովարտակում, որը հայտնի է Գյուլխանեի «հաթթը շերիֆ» կամ թանզիմանյան հրովարտակ անունով։ Հաթթում մասնավորապես ասված էր. «Իլթիզամը մի աղետ էր, որից պետու-

թյունը երբեք օգուտ չտեսավ։ Այն նշանակում էր մի ամբողջ շրջանի քաղաքական ու տնտեսական բախտը վստահել մի անձնավորության, որն իր ագահությանը հագուրդ տալու համար ծծում էր ժողովրդի արյունը»[42]։ Չնայած այն բանին, որ 1842 թ. փետրվարին պետությունը ստիպված եղավ վերականգնել, իսկ 1847-ին ևս հինգ տարով երկարացնել իլթիզամի գործունեության ժամկետը[43], սակայն նոր արտադրական հարաբերությունների ստեղծումով այս ինստիտուտի գոյատևման հնարավորություններն արդեն սպառված էին։ Առանձին դեպքերում իլթիզամի պրակտիկան կիրառվում էր մինչև կայսրության վախճանը[44], սակայն երկրի տնտեսական կյանքի ընդհանուր ֆոնի վրա այն արդեն որակ չէր կազմում։

Ուսումնասիրության արդյունքները թույլ են տալիս հանգել հետևյալ եզրակացությունների.

Իլթիզամը որպես հարկահանության սիստեմում կիրառվող երևույթ, գոյություն է ունեցել Օսմանյան պետության կազմավորման ժամանակից, սակայն այն կուռ սիստեմի է վերածվել լոկ XVI դարում։ Այն արտադրական և հասարակական հարաբերությունների խորքում տեղի ունեցող պրոցեսների ծնունդն էր։ Ընդհանուր պատմական ասենդենցը տանում էր դեպի ավելի բարձր մակարդակի արտադրական հարաբերությունների ստեղծում։ Այս ճանապարհին իլթիզամը հնի՝ ֆեոդալիզմի զարգացման ստորին փուլին յուրահատուկ պետական հողատիրության, և նորի՝ մասնավոր հողատիրության ձևերի պայքարի ծնունդը հանդիսացավ։

. Իլթիզամի վերաճումը մալիքյանեի սիստեմի, թուրքական ֆեոդալիզմի էվոլյուցիայում մի նոր փուլի սկիզբն էր նշանավորում։ Այս փուլն ավարտվեց կենտրոնախույս ձգտումների կրող հանդիսացող խոշոր հողատերերի՝ այանների երևան գալով։

Իլթիզամի սիստեմը մեծապես նպաստեց առևտրական բուրժուազիայի ձևավորմանը, որը պատմական այլ միջավայրում կարող էր վերածվել արդյունաբերականի։ Սակայն օսմանյան հասարակարգի բնորոշ առանձնահատկությունները թույլ չտվեցին կապիտալիստական հարաբերությունների խորացմանը։

Կատարելով իր պատմական առաքելությունը և հող նախապատրաստելով նոր արտադրական հարաբերությունների համար, իլթիզամը վերածվեց ֆեոդալական կարգերի կոնսերվացման միջոցի և դուրս մղվեց նոր ինստիտուտների կողմից։

М. Т. БОДЖОЛЯН

ИЗ ИСТОРИИ ОСМАНСКОЙ ОТКУПНОЙ СИСТЕМЫ (ИЛЬТИЗАМ)

В османской налоговой системе, равно как и социально-экономической жизни империи, значительную роль сыграла откупная система взимания налогов, т. н. «ильтизам». Несмотря на это, вопрос этот до последнего времени не подвергался специальному изучению, хотя как отечественные, так и зарубежные османисты в своих трудах неоднократно затрагивали эту проблему. Критически осмыслив источники, главным образом опубликованные в последние десятилетия турецкие документы, автор сделал попытку показать сущность и место этого феодального института в жизни османского общества и пришел к следующему заключению: Ильтизам в османском обществе существовал не с XVI века, как считалось ранее, а с раннего периода его существования, а в XVI в. был распространен также на земельные доходы и был превращен в систему; он явился одним из выражений перехода от государственной собственности на землю к частной, что в тех исторических условиях было прогрессивным явлением; превращение ильтизама в систему пожизненных откупов (маликяне) ознаменовало вступление османского общества в этап развитого феодализма, о чем свидетельствовало возникновение крупных феодалов-аянов, ставших носителями центробежных устремлений; ильтизам определенно способствовал образованию торгово-ростовщической буржуазии, а в совокупности — складыванию новых производственных отношений. Этим он исчерпал свои возможности и, как пережиток прошлого, был вытеснен из жизни общества новыми общественными отношениями.

1 *Տե՛ս* А. Ф. Миллер, Мустафа паша Байрактар. Оттоманская империя в начале XIX в., М.—Л., 1947; А. Д. Новичев, История Турции, т. I. Эпоха феодализма. Л., 1963; И. М. Смилянская, К вопросу о разложении феодальных отношений в Сирии, Ливане и Палестине в середине XIX в. — «О генезисе капитализма в странах Востока (XV—XIX вв.)», М., 1962; В. П. Мутафчиева, К вопросу о феодальной иерархии в османской военно-ленной системе (XV—XI вв.). — «О генезисе капитализма в странах Востока (XV—XIX вв.)», М., 1962; Հ. Ղազարյան. *Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800—1870 թթ.*, Երևան, 1967

Դ. Սյվազովի, *Պատմություն Օսմանյան պետության, հհ. Ա, Բ, Վենետիկ 1841*, St. Shaw, The Financial and Administrative Organisation and Development of Ottoman Egypt. Princeton, 1962; H. Inalcik, The Ottoman Empire. The Classical Age, 1300–1600. London, 1973:

2 M. Akdağ. Türkiyenin Iktisadi ve Içtimai Tarihi, c. 2, 1453—1559, Istanbul, 1974.

3 Z Karamürsel, Osmanli Mali Tarihi hakkinda tetkikler. TTK yayini, Ankara. 1940 S. 202

4 M. Sencer, Osmanli Toplum Yapisi. Devrim strajedisi açisindan. Istanbul 1969, S. 295. M. Z. Pakalin. Tarih Deyimleri ve Terimleri sözlüğü, Istanbul 1971, c. 2, S. 57—58 madde „Iltizam" ve „Iltizamal".

5 M. Z. Pakalin, նշվ. աշխ., M. Akdag. նշվ. աշխ. S. 335--336; M. P. L. d'Aubignosc, La Turquie nouvelle jugée au point ou l'ont ammenees les reformes du Sultan Mahmud, tome 2, Paris, 18 9, p 109.

6 M. Akdag, *նշվ. աշխ., էջ 335—336։*

7 Ibid, *Նույն տեղում։*

8 Ռազմական ծառայության դիմաց սպահական հողերի ժամանակավոր տիրակալությունն ստանձնած զինվորականները, այսպես կոչված զաիմները և թիմարատերերը։

9 M. Akdağ, *նշվ. աշխ., էջ 339։*

10 Նույն տեղում, էջ 343։ Սովորաբար պատմական գրականության մեջ տարածված է այն կարծիքը, համաձայն որի մյուլթեզիմները աճուրդի ժամանակ վճարում էին իլթիզամի ամբողջ արժեքը։ Իրականում ավելի հաճախ կիրառվում էր այս գումարը մաս առ մաս մուծելու պրակտիկան։ Հակառակ դեպքում անհասկանալի էր դառնում դրամափոխ-սարրաֆների դերը այս գործարքներում։

11 Նույն տեղում։

12 M. P. L. d'Aubignosc, *Նշված աշխ, էջ 109։*

13 M. Akdağ, *Նշված աշխ., էջ 346։*

14 M. J. Pakalin, *Նշվ. աշխ., էջ 57—58։*

15 R. Kaynar. Mustafa Reşit Paşa ve Tanzimat, Istanbu', 1954, s. 178:

16 Նույն տեղում։

17 Pakalin, *նշվ. աշխ., էջ 58։*

18 M. P. L. d'Aubignosc, *նշվ. աշխ., էջ 111։*

19 Նույն տեղում, էջ 113։ -

20 M. Akdağ, *նշվ. աշխ., էջ 113։ Սույն աշխատության 351—359 էջերում հեղինակը բազմաթիվ արխիվային փաստեր է բերում հրեաների իլթիզամներ ձեռք բերելու մասին։ Դրանք հիմնականում Բուրսա քաղաքի դատական ցուցանակների արխիվից վերցված նյութեր են։*

21 S. Yerasimos, Azgelişmişlik sürecinde Türkiye, c. 2, iktnci baski, Istanbul, 1977, s. 613: *Պատահում էր, որ թիմարատերերը, զաիմները և վաքֆների մութեվելլիները ևս իրենց տիրույթները բարձր տոկոսներով կապալի էին*

տալիս սարրաֆներին, վերջիններս իրենց հերթին դրանք վերավաճառում էին երկրորդական մյուլթեզիմներին և այլն: Տե՛ս N. Berkes, Türkiyede Çağdaşlaşma, Ankara, 1973, s. 101:

22 Այս մասին տե՛ս Մ. Կ. Զուլալյան, Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ, Երևան, 1966:

23 M. A. Ubicini, Lettres sur la Turquie, Paris, 1853, s. 288:

24 S. Yerasimos, նշված աշխ., հ. 1, էջ 469—470:

25 Մյուլք (մասնավոր սեփականություն) և մելիք կամ մալիք (սեփականատեր) բառերից: Այս հանգամանքը ցույց է տալիս, որ պետական հողատիրության սիստեմում առաջ էր եկել մի նոր՝ մասնավոր հողատիրության վերաճման միտում: Ձևականորեն մալիքյանեի տերը տվյալ մուկատաայի տիրակալն էր դառնում միայն իր կենդանության օրոք և այն ժառանգելու իրավունք չուներ: Սակայն դա պետական հողատիրությունից դեպի մասնավորը կատարված կարևոր մի քայլ էր, որը խարխլեց Օսմանյան ավանդական հողատիրության հիմքերը:

26 М. С. Мейер, К периодизации истории Турции эпохи феодализма.—Тюркологический сборник, 1976, М., 1978, с. 75—87.

27 C. Uluçay, 18. ve 19. yüzyıllarda Saruhanda eşkiyalık ve halk hareketleri, Istanbul, 1955. s. 7.

28 Նույն տեղում:

29 Նույն տեղում:

30 N. Berkes, նշված աշխ., էջ 93: Այս շրջանում բոլոր խասսերը և եկեղեցապատկան հողերը բաժանված էին պալատի կանանց միջև, որոնք մեծ հաճույքով սկսեցին օգտվել հարկահավաք-մյուլթեզիմների ծառայություններից. M. A .Ubicini, նշված աշխ., էջ 7:

31 Սլավոնական «վոեվոդա» բառի աղավաղված ձևը:

32 Y. Yucel, նշված աշխ., էջ 682:

33 Սուբաշին նշանակվում էր սանջակբեյի կողմից և պատասխանատու էր տվյալ վարչական միավորի ներքին անվտանգության համար:

34 Այանների մասին տե՛ս Մ. Բոչոլյան, Այանները և դերեբեյլիք ինստիտուտների մասին,—ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1981, № 9: V. Mutafcieva, L'Institution de l'ayanlik pendant les dernieres decennies du XVII. siecle.—Etudes Balkaniques, Sofia, 1965, № 2—3, p. 233—247; H. Bowen, Ayan.—Encyclopedie de l'Islam, t. 1, Paris, 1·58, p. 801; I. H. Uzunçarşili. Ayan.—Islam Ansiklopedisi, c. 2, Ankara, 1946, s. 41.

35 К. Маркс, Капитал. Критика политической экономии. Т. 3. — К. Маркс и Ф. Энгельс, Соч., изд. 2-ое, т. 25, ч. 2, с. 146.

36 Ç Uluçay, նշված աշխ., էջ 152:

37 M. Aktepe, Patrona isyani, Istanbul, 1958, s. 8—9; Ç. Uluçay, նշված աշխ., էջ 7.

38 M. Belin, Türkiyenin Iktisadi Tarihi hakkinda tetkikler, Ankara, 1931. s. 191.

39 M. Aktepe, նշված աշխ., էջ 4—5։

40 R. Kaynar, նշված աշխ., էջ 178։

41 M. A. Ubicini, նշված աշխ., էջ 141։

42 R. Kaynar, նշված աշխ., էջ 178։

43 А. Д. Новичев. История Турции. Новое время, т. 2, ч. I (1792—1839), Ленинград, 1968, с. 129; M. A. Ubicini, նշվ. աշխ., էջ 141։

44 W. L. Wright, Ottoman Statecraft. The book of counsel for vezirs and governors, Princeton, 1935, p. 98.